№ 151 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 (17) 1878 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 (17) № 151

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էլ չեն գաղթի։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ղարսից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Հայրենիք վտանգի մէջ է։ Փոքր-Ասիա։ Նամակ Թիւրքիայից։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Նամակ Գերմանիայից։

## ԷԼ ՉԵՆ ԳԱՂԹԻ

Տեղական ռուս լրագիրներից ստացած հեռագիրները և մեր խմբագրութեան մէջ ստացած նամակները տեղեկացնում են մեզ որ գեներալ Լազարեվ մի պրոկլամացիա է ուղղել դէպի Էրզրումի հայերը, որի մէջ հանգստացնում է հայերին, համոզում է նրանց հաստատ մնալ իրանց տեղերում և չը գաղթել իրանց հայրենիքից։ Այդ բաւական չէ. գեներալ Լազարեվ հայերի ապահովութեան համար նշանակել է Էրզրումի ժամանակաւոր գեներալ-կօնսուլ պ. Կամսարականին, մի երիտասարդ հայ զինուորականին, որին իր խելքի, ընդունակութիւնների և բարի սրտի համար ռուսաց զօրքի Էրզրում եղած կարճ միջոցում սիրեցին թէ հայերը և թէ թիւրքերը։ Կամսարական մեծ հեղինակութիւն է ստացել նահանգի ամբողջ ազգաբնակութեան մէջ և այսուհետև, ինչպէս մեզ գրում է մեր Էրզրումի թղթակիցը, մի մազ ընկնելու չէ հայի գլխից։

Գեներալ Լազարեվի հրատարակած պրոկլամացիան հասաւ ուրեմն իր նպատակին. հայերը հանգստացել են և այսուհետև ոչ մինը նրանցից գաղթելու չէ իր հայրենիքից։

Այո՛, գեներալ Լազարեվի արած գործը ոչ թէ միայն համապատասխան է ռուսաց կառավարութեան Հայաստանի վերաբերութեամբ ունեցած քաղաքականութեան, բայց դա մի և նոյն ժամանակ և լաւ հայի գործ է։ Նա իր պարտաւորութիւնը կատարել է որպէս ռուս գեներալ, որպէս մարդասէր, զարգացած անձն, և վերջապէս որպէս ազգասէր սիրտ ունեցող հայ մարդ։

Այժմ հայերը մնալով իրանց հայրենիքում, թո՛ղ զարգանան հետզհետէ մտցնելով իրանց շրջանը ընդհանուր մարդկային քաղաքակրթութիւնը, թո՛ղ ծանր կերպով մտածեն ապագայի համար պատրաստվելու, թո՛ղ ոչինչ ազնիւ միջոցներ չարհամարհեն մտցնել քաղաքակրթութեան լոյսը իրանց շրջապատող վայրենի ցեղերի մէջ։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

25 օգոստոսի

Ղարսի հայ ազգաբնակութիւնը պատերազմից կրած զանազան հարուածներից և ժամանակիս խառն դրութիւններից փոքր ինչ հանգստութիւն գտնելով, իրան արիաջան և գործունեայ առաջնորդ հայր Գրիգորիս Աղուանեանի հետ աջակից լինելով ամեն բանից առաջ իր ուշքը դարձրել է ուսումնարանի բարեկարգութեան վրա։ Ամսոյս սկիզբներին ժողով կազմելով ընտրեցին քաղաքի անուանի անձերից հոգաբարձուներ՝ մեծապատիւ Գէորգ Էնֆիաճեանցին, Ղուկաս Սաղաթէլեանցին և Մելքոն Շէխեանցին։ Այս նորընտրեալ հոգաբարձուների գործունէութեան վրա մեծ համակրութիւն և յոյս ունի հասարակութիւնը, որք այժմէն իսկ սկսած են հոգալ և աշխատել ուսուցիչներ հրաւիրելու և ուսումնարանի ամենայն պիտոյքները առաջիկայ սեպտեմբեր ամսից պատրաստ ունենալու։

Մի այլ անգամ կը խօսեմ մի քանի խօսք ասել Ղարսի հայ հասարակութեան և նրա արժանաւոր և գործունեայ առաջնորդ հայր Գրիգորիսի մասին։ Առ այժմ հաղորդում եմ որ օգոստոսի 19-ին, երեկոյեան ժամը 7-ին, յանկարծ միջնաբերդից արձակվեցաւ մի թնդանօթ դղրդելով քաղաքը. օտարաքաղաքացիք այդ թնդանօթաձգութենից խիստ խռովեցան, իսկ տեղական բնակիչները գիտէին որ այդ թնդանօթի արձակումը յայտնում է տաճիկներին նրանց օրօճի-ծոմապահութեան սկսվելը։

Տաճիկ ազգաբնակութիւնը կամենալով իրան կրօնական արարողութիւնը առաջին տարիների նման թնդանօթաձգութեամբ կատարել, դիմել էին գեներալ Լազարեվին և խնդրել նրա տնօրէնութիւնը։ Գեներալը յարգելով տաճիկ բնակիչների խնդիրը, տնօրինել էր նրանց ցանկութեան համաձայն, իւրաքանչիւր երեկոյ ժամը 7-ին և գիշերվայ ժամը 3-ին մի մի թնդանօթ արձակել։ Երբ երեկոյին արձակվում է թնդանօթը ամենայն տաճիկ շտապում է վազել դէպի տուն, իր ծոմ բերանը և քաղցած որկորը լցնելու-ուտելու։ Ընթրիքը ուտելուց յետոյ մեծ և փոքր, բացի կանանցից, հաւաքվում են մզկիթներում և այնտեղ մի քանի ժամ աղօթելուց յետոյ ցրվում են. ոմանք դէպի տուն են գնում, ոմանք հաւաքվում են իրանց խանութների մէջ և ոմանք ևս ղահվէխանաներում (սրճարաններում) և այն տեղ ժամանակ են անցկացնում. մինչև լուսաբացին երկու ժամ մնալը արթնութեան և ուտել խմելու մէջ են անցկացնում և երբ այդ ժամանակ թնդանօթը արձակվում է վերջին անգամ ընթրում են և ննջում։ Ցերեկը արթնանալուց յետոյ կրկին աղօթք և ծոմապահութիւն են կատարում մինչև երեկոյեան ժամի 7-ը, ապա սկսում են դարձեալ ուտել։ Ահա այսպէս այս կրօնական արարողութիւնը տևելու է 30 օր, որից յետոյ գալիս է սրանց զուրպան պայրամի, որի տօնին ամենայն մարդ պարտաւոր է մի քանի ոչխարներ զոհել։

Ղարսի թիւրք ազգաբնակութիւնը մեծ մասամբ անհաստատ դրութեան մէջ է, ոչ մի գործի ձեռնամուխ չէ լինում և պարապ նստած ղայֆեխանեքում սպասում է իրերի վիճակի և սահմանների որոշմանը. նրանցից շատերը այն կարծիքի են թէ Ղարսը կրկին յետ կը տրվի առաջին պատերազմների օրինակի նման։ Եթէ վերջնականապէս ռուսաց տիրապետութեան տակ մնալը տեղեկանան և հաւաստիանան, խիստ շատեր մտադիր են գաղթելու դէպի Էրզրումի և Շամի երկիրները։ Շատերը իրանց կահկարասիքը և տները ծախում և պատրաստվում են.

Ամսիս սկզբներին Ղարսի բանակի հրամանատար գեներալ Լազարեվ հաւաքելով Նոր գրաւած երկիրների ազգաբնակութիւնը յայտնեց նրանց Նորին Կայսերական Բարձրութեան փոխարքայի հրամանը որ ամեն բնակիչները զինաթափ լինելու են շուտ ժամանակամիջոցում և յանձնելու են իրանց զէնքերը շրջանների կառավարիչներին, որի փոխանակ ստանալու են գանձարանից վարձատրութիւն։ Անմիջապէս իսկոյն սկս-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Լայպցիգ 1 սեպտեմբերի

Օգոստոսի 1-ից Գերմանիայի բոլոր համալսարանական քաղաքներում ամեն տարի նկատվում է մի առանձին շարժողութիւն։ Դասախօսութիւնները համարեա վերջացած են լինում, ուսանողները քաղաքի փողոցներում խումբ խումբ, այստեղ ու այնտեղ կանգնած՝ բարձր ձայնով խօսում ու ծիծաղում են, կամ չամադաններով բեռնաւորված կառքերում նստած, շտապով դէպի երկաթուղու կայարաններ են քշում։ Բոլորի շարժուածքները և դէմքերը առանձին բաւականութիւն և ուրախութիւն են արտայայտում։ Կառքերում նստած միմեանց հանդիպելով, երիտասարդները բարևում են միմեանց հեռուից ժպտալով, գլխարկները օդի մէջ շարժելով և զանազան բարեկամական նշաններ միմեանց անելով։

— Դու ո՞ւր ես գնալու այս արձակուրդին, դիմեց ինձ ընկերներիցս մինը, և իմ պատասխանիս չը սպասելով, շարունակեց՝ ես Բրունսի հետ գնալու եմ Կէօլն, այնտեղից ի հարկէ Հռէնոսի ափերի երկայնութեամբ կը շարունակեմ ճանապարհս։

— Շատ ուրախ եմ որ միասին կը ճանապարհորդենք, ասում է մի ուսանող միւսին, ուրեմն հաստատ կաց տուած խօսքիդ։

— Ես քեզ Լինդաուի մէջ կը սպասեմ, ուրեմն առ այժմ ցը տեսութիւն, լսվում է ուրիշ տեղ։ Սեղմում են միմեանց ձեռքերը ու հեռանում։

Ամեն տեղ, ամեն կողմից լսվում է՝ Տիւրինգէն, Տիրօլ, Շվէյցարիա, Շվարցվալդ, Հարց....

Հարուստ ընտանիքները գնում են ի հարկէ դէպի ջրերը, կամ Փարիզ։ Այս տարի, մանաւանդ, աշխարհահանդէսը բոլոր փող ունեցողներին իր կողմն է քաշում։

Ամառ ժամանակ մեծ թէ փոքր, կին թէ մարդ, հարուստ թէ չքաւոր, ամեն մէկը կարծես մի առանձին աներևոյթ, դիւթական ոյժով դրդած, պահանջ է զգում դուրս գալ գոնէ մի երկու շաբաթով իր սովորական շրջանից, թողնել տուն ու տեղը, իր ծանր պարապմունքները, — ու գնալ իր հայրենիքի բազմաթիւ անտառներում, սարերում ու ձորերում ազատ շունչ քաշել, որպէս զի յետոյ նոր ոյժերով տուն վերադառնալով, նոր եռանդով շարունակի իր սովորական պարապմունքները։

Մեզ, կովկասեցիներիս համար, այս տեսակ զգացմունքը խորթ է, ի հարկէ։ Մենք սովոր ենք մեր ամբողջ կեանքը թոզոտ, ցեխոտ քաղաքներում անցկացնել։ Մեր ամարանոցների մաքուր օդը ծծելու իրաւունքը տուած է միմիայն հարուստներին։ Եւ իրաւ, ինչ ահագին միջոցներ են հարկաւոր մեր Կովկասեան ամարանոցներում ամառը անցկացնելու համար։ Բացի միջոցներից, այդ ամարանոցներից օգուտ կարող է քաղել միայն նա, ով քաղաքի հետ կապված չէ որ և է պարապմունքով, ուրեմն էլի հարուստները ու նրանց ընտանիքները։ Իսկ աշխատող դասին միթէ հարկաւոր է մաքուր օդ ու մաքուր ջուր, — դա մեզանում շռայլութիւն է համարվում։

Ընդհակառակն, այստեղի կեանքի հանգամանքները բոլորովին ուրիշ են։ Ում միջոցները, կամ գործերը չեն ներում ամբողջ ամառը քաղաքից դուրս ապրելու, նա ունի, այնու ամենայնիւ միջոց իր ազատ ժամերը անցկացնել քաղաքներին մօտակայ գիւղերում, որոնք մեծ մասամբ պատած են լինում գեղեցիկ, մաքուր պահպանված անտառներով, կամ այգիներով։ Ամառվայ գեղեցիկ օրերից այստեղ ամեն մէկը օգուտ է քաղում. մինչև անգամ միջնակարգ ուսումնարանների աշակերտները ու աշակերտուհիները իրանց արձակուրդը ճանապարհորդութեան մէջ են անցնում։ Ամեն մէկը ունի ազգական, բարեկամ այս կամ այն գիւղում, որին, օգուտ քաղելով իր ազատ ժամանակից գնում է այցելութիւն անելու։ Ես շատ անգամ պատահել եմ այստեղի երկաթուղիների վագոններում 13—14 տարեկան օրիորդի, ճանապարհի փոքրիկ քսակը ձեռին, մէնակ ճանապարհորդելիս։ Այդ տեսակ դէպքերում միշտ ակամայ յիշում էի մեր խեղճ օրիորդներին, որոնցից ընտրեալները նոր են ստանում ցերեկով մէնակ տանից դուրս գալու իրաւունքը.... Շատ անգամ, մանաւանդ առաջին ժամանակները, դիմելով ճանապարհորդ փոքրիկ գերմանուհուն, ես զարմացած հարցրել եմ՝ «օրիորդ միթէ չէք վախենում մէնակ ճանապարհորդելու», և միշտ այնպիսի հաստատ, վստահ և վճռողական պատասխան եմ ստացել, որ վերջը ինքս իմ հարցմունքից ամաչել եմ։

Բայց այս տեսակ դէպքերը միակ առիթ չեն լինում Գերմանիայում մեզ, կովկասեցիներիս ամաչելու։ Չը նայելով Եւրոպայի տիպերի խառնակութեանը, մենք կովկասեցիներս, մեր սև, մեծ աչքերով, երեսի թուխ գոյնով ու ահագին քթով միշտ ամեն տեղ աչքի ենք ընկնում, ու առանձին ուշադրութեան առարկայ ենք դառնում։ Գերմանացին մեզ հետ ծանօթանալով, սովորական մի քանի խօսքերից յետոյ, իսկոյն հետաքրքրութեամբ հարցնում է, թէ ինչ ազգութեան ենք պատկանում։ Էլ ինչ ասել կուզէ, որ օգուտ քաղելով հայոց խնդրի յուզվելուց, ես վերջին ժամանակը այդ տեսակ հարցերին շտապում եմ հպարտութեամբ կարճ պատասխան տալ թէ՝ ես հայ եմ։ Լուսաւորված եւրոպացու համար էլ երկար բացատրութեան հարկաւորութիւն չը կայ, այժմ բոլորը գիտեն թէ ինչ բան է հայը, այժմ եւրոպացին Կովկասի և Հայաստանի մասին գուցէ աւելի տեղեկութիւններ ունի, քան թէ մեզանից շատերը։ Բայց երբ որ խօսակցութիւնը շարունակվում է, մեզ հայ անուանելու հպարտութեան առաջին զգացմունքը շուտով անցնում է։

— Ա՜խ ինչպէս կը ցանկայի ես Կովկասում ճանապարհորդելու, ձեր երկրի բնութեան հարստութիւնների հետ ծանօթանալու, ասում է գերմանացին։ Դուք իրաւունք ունէք, մեզ գերմանացիներիս ծաղրելու, տեսնելով թէ ինչպէս մենք մեր համեմատաբար փոքրիկ լեռներով ու աննշան տեսարաններով զմայլվում ենք։ Ինչ արած, ամեն մարդ պէտքէ իրանով բաւականանայ....

— Ի հարկէ, մեր երկիրը բնութեան կողմից

